



# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.  
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.  
կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէրց)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
իրաւանիւր բառին 2 կոպեկ.  
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՏՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1899 ԹԻԱԿԱՆԻ

## ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

### ԴՐԱՅԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՅԱՆ ԼՐԱԿՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԱՄԱՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականները՝ 9 ռ., ինն և ութ ամսականները՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՏԱՆԸ (Բաղրանայա և Բարձրակայա փողոցների անկիւն):  
Կարողութեան ուրիշ քաղաքներէրց «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ»;  
իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

#### ԲՈՎԱՆԻՍԱՌՈՒԹԻՒՆ

Ընտանիքի բաժանում. — ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Առաջակութիւնը Կովկասում, Նամակ Սիմֆերոպոլից. Նամակ Բալթիկայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱԿ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուրեր Թիւրքիայից. Ֆրանսիա և Գերմանիա. Արտաքին լուրեր. — ԽԱՆԻՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳՐԱՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից:

#### ԸՆՏԱՆԻՔԻ ԲԱԺԱՆՈՒՄ

Մեր նորագոյն կեանքի ամենասովորական երևոյթներից մէկն է ընտանիքի բաժանումը և մի օջախից մի քանի օջախներ կազմվելը: Ներքին գործերի միջնորդութիւնը, աչքի առջ ունենալով, որ ընտանիքի բաժանումը գիւղերում պատճառ է լինում անտեսական ձախարակում:

Եւ Յարգին: Դրանք Շնորհ և Սէմալ գիւղերից էին: Փոջօսիկի սար խեղդվել են երեք հատ քօտիկցիներ, որոնք էլի դաշտից վերադառնում էին մէկ-մէկ պարկ հաց հասցնելու իրանց սովատանջ երեխաներին: Ա. Կարապետի վանքի կողմը, Քարքէի լեռնաշղթայի վրա, խեղդվել է էլի մի վարտովցի մարդ, որը յանդգնութեամբ ուզել էր միտնալ կտրել անցկնալ այդ անադին լեռնաշղթան և մոլորվել է ճանապարհից ու մնացել է այնտեղ: Որը թւեմք և որը ասեմք. այս տեսակ դէպքեր սովորական են դառել մեզ համար: Այո, այս տարվան ձմեռ շատ խիստ է: Արդէն դեռ նոր տարին չէ ողջունում լեռ, ձոր, դար ու դաշտ ամեն ինչ ծածկված էր ձնան թանձր չեքտի տակ: Ամառ քուրդերի և աւաղակների ձեռքից, այժմ էլ ձնան պատճառով՝ գիւղից գիւղ երթնակութիւն անկարելի է: Ամեն ունեւ, ամեն մարդ թաղված է իր ծանր վշտերի և նեղութիւնների մէջ և նրանով տապալվում է: Նրանակայելու է, թէ որ աստիճան սովածութիւն տանջում է խեղճ գիւղացիներին, որ այս եղանակին իրանց տաք թուղբան չուրթից ստիպվում են հեռանալ, կեանքը հազար և մի վտանգի ենթարկել և դնալ անցկնալ սալերից: մի պարկ հաց ձեռք գցելու համար:

Այժմ միայն լեռնային գիւղեր մի քիչ ազատ են մի ծանր բեռից. դա այն է, որ ձմեռվան խտութեան պատճառով ճանապարհներ փակ են և թոյլ չեն տալիս դաժան հարկահաւաքներին հեշտութեամբ, շուտ շուտ գնալու այդ կողմ: Բայց այդ կողմից դաշտի գիւղեր արդէն կրակի մէջ են: Տեսնում ես մի 20—30 սոված հարկահաններ լեցվեցան գիւղ. բաւական է մի տաք ախոռ գտան, մինչև մէկ երկու տարվան ապակիկ մնացած տուրքեր չը գանձեն, դուրս չեն գալ գիւղից: Այժմ չարչարանքների, տանջանքների սեղօն է. խեղճ գիւղացիք փախչելու մի տեղ, թաղմբելու ապաւէն չունեն. չլէք, ասեմք, եթէ ամառ լինէր, կարելի էր մի կերպ չարախնդրով դուրս պահել, թագ կենալ անտառներում և արտերում, իսկ այժմ ինչ անէ խեղճ գիւղացին. նրան այնպէս են բռնում տանը,

թիւնների և զրկանքների, որոշել է ենթարկել նրան մի յայտնի կանօնի: Մինչևտուրութեան ցանկութիւնը այն է, որ իւրաքանչիւր ընտանիք ապահովված լինի հողով և այդ հողը մի որոշ չափից պակաս չը լինի: Մի և նոյն ժամանակ մի նիստրութիւնը մտադիր է ընտանիքի բաժանման գործը ենթարկել գիւղական համայնական ժողովի իրաւասութեան և բաժանում թոյլ տալ համայնքի հաճութեամբ միայն:

Միանգամայն ժամանակակից և նպատակաւոր մարմին է յարուցած հարցը և կատարելապէս իրաւացի է կանօնաւորութեան պահանջը մի այնպիսի փափուկ խնդրում, որտեղ շատ հեշտութեամբ կարող են տեղի ունենալ զեղծութիւններ և զրկանքներ: Բայց հարցի կարեւորութիւնը և փափուկութիւնը միւս կողմից պահանջում է, որ կանօններ սահմանելը կատարվի մեծ զգուշութեամբ և լրջութեամբ: Ընտանիքի բաժանումը բարդ խնդիր է. նա պարտաւորում է իր մէջ ոչ միայն հասարակ տրնտեսական, այլ և բարոյական, հասարակական տարրեր, որոնց չէ կարելի անտեսանել ընտելութեան միջոցին:

Այդ պատճառով գիւղական համայնքը չը պէտք է այնպիսի արտօնութիւններ ստանայ, որ նրանից լինի կախված ընտանիքների ներքին կեանքի և հոգեբանական ներքութիւնների կարգաւորումը: Գիւղական համայնքը պէտք է պաշտպանի զեր կատարել զրկվածների և թոյլերի համար: Եթէ չէ, բարութեան փոխարէն, մենք տուած կը լինենք ժողովրդին մի դժուար լին դրութիւն, որտեղ ոչ մի տնտեսական հայեցակէտ չէ կարող ամբողջ մարդկանց տանջանքները: Մինչևտուրութիւնը դեռ չէ վերջացրել իր ուսումնասիրութիւնը և

ցանկանում է ունենալ մանրամասն նիւթ, հիմնված իրական կեանքի ծանօթութեան վրա:

Ընտանիքի բաժանումը ունի իրական կեանքի մէջ իր պաշտպաններ և հակառակորդներ: Պաշտպանները մեծ մասամբ գիւղի երկրասարք մարդիկ են, որոնք այլ ևս չեն տանում աւանդական կեանքի շրջութանը և ծանրութիւնը և կամենում են ապրել իրանց ցանկութեան և նոր հայեցանքների համեմատ: Սակայն նոր ընտանիքները շատ անգամ խիստ կերպով վնասներ են կրում, որոնք զգալի են դառնում ապագայում, երբ կեանքը իր կարիքներով առաջ է մղում իր ուժեղ իրաւունքները:

Աչքի առաջ ունենալով այն ահագին նշանակութիւնը, որ ունի գիւղական կեանքի համար ընտանեկան բաժանումների հարցը, մենք կը կամենայինք, որ մեր մէջ եղած կարգերի, դրանցից առաջացած հետեւանքների մասին լուրջ ուսումնասիրութիւններ երևան գան: Ցանկալի էր, որ գիւղերին ծանօթ մարդիկ հազորդէին իրանց կարծիքները և տային իրական փաստեր, որոնց վրա հիմնվելով, կարելի կը լինէր յայտնի եղբակցութեան հասնել և գործնականապէս վճռել յարուցած հարցը:

#### ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

1892 թւականը մի ճգնաժամ էր Հայաստանի հայ եկեղեցու պաշտպաններին համար: Այդ ժամանակն էր, որ եկեղեցական ընտրութիւնների մէջ հանդէս եկաւ մի նոր ոյժ—ժողովուրդը, որ սկսեց ահագին բազմութեամբ դիմել ընդտուփերին, ունենալով իր գործունէութեան համար որոշ ծրագիր: Նրկու տարուց յետոյ, Ներ-

նորական տեղապահ Վարդան վարդապետ Յակոբեանի պատիւը և նրան ալ իր նախորդի նշանակաւոր երկրից, սակայն չնորհիւ մի քանի լուրջ անձանց աշխատութեան, թշնամիներ տապալված են այժմ:

Քաղաքի ուսումնարաններից այժմ կարելի չէ մի բան յուսալ, որովհետեւ Միացեալ ընկերութեանց կենտրոնական վարժարան, որ երջանկայիշատակ Ներսէս պատրիարքի անուանով կոչվում էր Ներսիսեան, վաղուց փակվել է: Կան մի քանի թաղային վարժարաններ, որոնց բարոյական մակերևոյթ էլ բարձրացել ամէրդէտական գրութիւնից, աւելի լաւ է թմբոց առնուանը դրանց, քան թէ դպրոց: Վարդան վարդապետը, իր նախորդի հետեւորդութեամբ, որքան ներում են տեղական պայմաններ, շատ ուժ է տալիս գիւղական և վանական վարժարաններին: Առաքելոյ վանքի սրբանոց բաւական կանոնաւորութիւն է գտել: Այժմ ունի չորս պաշտօնեայ (ուսուցիչ, կառավարիչ և այլն) և 50—60 որբ աշակերտներ, թէև վանքի և որբանոցի բնօրէն շատ աննախանձելի է և որբանոց շատ քիչ անդամ նպաստ կընդունի պատրիարքարանից: Ա. Կարապետի վարժարան, ընդհանուր վանայայ առաջնորդի բացակայութեան պատճառով, կորցրել էր իր գոյութեան նշանակութիւնը և միայն պահում էր մի քանի այսպէս ասած՝ փոխառաց մանուկներ: Այս տարի նախաձեռնութեամբ տեղապահ հօր՝ կրկին աշակերտաց թիւ բարձրացաւ 42-ի և նշանակվեցին մի քանի ուսուցիչներ. ի միջի այլոց՝ ձայնագրութեան և գիտական ճիւղին ուսուցիչ նշանակվեց պ. Արմենակ Շահմուրադեան, որ աւարտել է Քիֆլիսի Ներսիսեան դպրոցը:

Այս բանը ս. Կարապետի վանքի համար շատ պատուաւոր և գոհացուցիչ է, սակայն վանքի նիւթական խիստ անձուկ վիճակը շատ յոյս չէ տալիս նրա յարատեւութեան:

Գիւղերումն ալ հաստատված են մի քանի ծրարական վարժարաններ, որոնց մասին չարժէ խօսել:

Անցորդ



սխառն գաղափարները հոգաբարձական ընտրություններին ժամանակ, ժողովրդական ընտրությունները առկա մեծ հարուստ հասցրին նրանց, որոնք արհեստ են դարձրել հայոց եկեղեցու միակ հարգատ դասակ համարել իրանց զուլալը. դրանք չէ կարողանալ չը տեսնել առանց խոր յուզմունքի, որ ժողովրդական մասնաձև ազատ մասնակցությունը եկեղեցական գործերի մէջ իրանց հաշիւն չէ գալիս Պէտք էր ճար գտնել: Եւ միակ ճարը սահմանափակումներ միջոցով մասնաձևից ազատվելն էր: Բայց ինչ անել: Հայոց եկեղեցին չէր դարձրել ժողովրդական սկզբունքներն է պաշտպանել և ամեն մի պաշտօնակցի ընտրությունը ժողովրդի ազատ կամքին է թողնել: Այդ սկզբունքը, իբրև դարաւոր մի դրուծիւն, մտել է և այն կանոններին մէջ, որ կառավարությունը տուել է հայոց եկեղեցուն: Ինչպէս այժմ սահմանափակել: Հայ պրոֆեսորներից մէկը, գինված Տօկմալի տեսություններով (?), օգտնություն հաստա և լուծեց Գորգեան հանգոյցը: Նա առաջարկեց բաժանել հայոց եկեղեցու ծուխը երկու մասի—հաւատացողներ և անհաւատներ. առաջինները իրաւունքների տէր են, իսկ երկրորդներին պէտք է դուրս վաճառել եկեղեցուց: Սակայն ինչպէս ընել հոգիները, ինչպէս ջոկել ոչխարներին այծերից: Պրոֆեսորը առաջարկում էր հաւատացեալների կարգում ընդունել նրանց, որոնք եկեղեցում հաղորդվում են:

Մեր մէջ այդ ծրագիրը գործադրելու դեռ առիթ չէ եղել: Բայց Պետերբուրգի հայոց եկեղեցու ծխական կառավարության խորհուրդը արդէն փորձեր է անում այդ սկզբունքը գործադրելու: Ահա ինչ է հաղորդում «Արար» հանդէսը:

16 տարի է, որ ընդհանուր ժողովներ են կայացել և ընտրություններ եղել: Ժողովներին բարձրագոյն (հաստատված) կանոնադրության համաձայն՝ մասնակցել են բոլոր ծխականները, որոնք եղել են առնուապէս 25 ամաց և երկու տարի Պետերբուրգ են եղել: Այդպիսիներին ծխական են հայտել: Ոչ ոք մինչև այժմ ծխականներից հաց ու փորձ չէ արել թէ ով է այս ինչ տարին ու հաղորդություն ընդունել տեղիս եկեղեցում և ով—ոչ, կամ թէ ով կարող է համարձակվել հայկական ազատ եկեղեցու հոգուն խորձ պահանջներ անելու: Այն ինչ, այժմ, մեր հակառակորդները յետին մտքով խորհրդարանում հարց են դարձնում թէ տեղիս ի՞նչ հայրն կարելի է ծընալ հայկական և որին ոչ և ըստ այնմ կազմել համադր ընտրությունաց մասնակցողների ցուցակը:

Հանդէսը աւելացնում է, որ ընտրողական աղբյուրից ցէնալ հաստատելու առաջարկությունը տապալվեց 1898-ի ընտրություններից առաջ, «բայց այժմ, ինչպէս լսում ենք, նորից ուզում են իրագործել այս անմիտ առաջարկությունը: Որ դա անմիտ առաջարկություն է, որ դա պատիւ չէ բերում մայրաքաղաքում ապրող ցիլիկները: «Բարձրագոյն» որոնք այսօր անհաւատ թվում են միջնադարեան գաղափարներից հեռու մնալու: Այդ կարող է ասել մեր երկրի նոյն իսկ հասարակ ժողովրդականը, որ դեռ «միջալ փախիւ» է կրում և հաւատացած է թէ երկրագունդը եղան եղլիւրի ծայրին է կանխած: Զարմանալիս այդ չէ. զարմանալիս այն կը լինի, երբ ամենիտ առաջարկությունը կընդունվի Պետերբուրգի հայրնի կողմից, որոնց մեծամասնությունը բազկացած է բարձրագոյն դպրոցների չէմբերը մայր և այժմ էլ մայրը մարդկանցից: Սրա այդ էլ տեղի կունենայ, այն ժամանակ մեր ինտելիգենցիայի վերաբերմամբ ամենաճիշդ խօսքերը կը լինեն՝ «Ամենայն ինչ կատարեալ է»:

Գերմանական թիւրքամոլությունը այն աստիճան սահմանափակված հաստա, որ նոյն իսկ թիւրքերը սկսեցին բողոքել: «Մշակի» ընթերցողներին յայտնի է, որ Վիլհելմ II-ի բարեպաշտական ուխտագնացությունը մեծ հաճոյքներ և շահադիտական գեղեցիկ ակնկալություններ ներշնչեց ոչ միայն գերմանական արհեստագործներին, թնդանօթ, հրացան պատրաստող դրամաններին, նպարավաճառներին, այլ և... բողոքական եկեղեցու այնպիսի ներկայացուցիչներին, որոնցից մէկն է պատուոք Նաուման Գրիստոսի այս «աշակերտը» թէ բարոյների և թէ կրօնական «շիջի» թերթի մէջ նկարագրեց այն տպաւորությունները, որ դուրս էր բերել Բոսֆորի ափերից և առանց այնպիսի մեծ յայտնաբերում, որ օսմանդները հայերի զոհերն են, որ հայերը Կ. Պօլսի պատուհանն են, որ հայերից վատթար ազգ չէ կարելի գտնել աշխարհի մէջ: Եկեղեցու պաշտօնեան ոչինչ անյարմարություն չէ տեսել ունակելու անելու Սինայեան պատուիրանների այն կէտը, որ հրամայում է սուտ չը խօսել, և բարոյել է թէ հայը իր չափի համար պատրաստ է ծախել իր կնոջն ու աղջիկներին և կողոպտել իր եղբայրներին: Եւ ա-

հա Լիւթերի անարժան ժառանգի բարբարոսական երեւակայութեան դէմ դուրս է եկել... թիւրքաց «Մէրվէթ» լրագիրը, որի տուած պատահանը թարգմանված է Կ. Պօլսի հայոց լրագիրներին մէջ: Լրագիրը, ի հարկէ, ոչ առանց փրօն հպարտութեան և շինծու վեհութեան, այս է ասում գերմանացի պատուոքին:

Պ. Նաուման թող չը նեղանայ. թիւրքերը ոչ զոր պիտի ատեն, որովհետեւ ամեն հոր և վեհանքն ազգ կարհամարէ ընդն ու ատելություն: Թիւրքերը տարբերություն չը պիտի դնեն հայոց և ուրիշներուն միջև: Եթէ որոշեցինք մեր յիշգրտութեան վտարել ժողովուրդի մը կենսական մէջ դնողական եղող այն քանի մը ժամերը, չենք կրնար մոռնալ այն ծառայությունները, զորս հայերը մատուցած են պետություն և երկրին: Միշտ աշխատասէր եղած են անոնք, և շատ մը ասպարէզներու մէջ փայլած են առաջին կարգերուն վրա: Ընտիր արհեստագործներ եղած են միշտ: Մէկ խօսքով, օգտակար եղած են: Եւ որն է այն ազգը, որ իր ծոցէն դուրս պիտի նետէր այն օգտակար տարրը, որ ցոյց տալով ուղիղ ճամբէն չը չեղելու իրական ճշտում մը, հակառակ ատելի զրդմանց, կողմէ իր մասը ունենալ ազգային գործունէութեան մէջ:

Պատմությունը կրկնում է, այն էլ շատ ցածրակարգի: Մի ժամանակ Արևելքի ըրիտուհեանները—զպտիները, ասորիները, հայերը, արևմտեան օրթոդոքսութեան կատարի հալածանքներից ազատվելու համար, դիմում էին մասնատրական բռնակալներին օգնություն: Այժմեան արևմտեան օրթոդոքսությունը, որ կրում է կաթոլիկ, բողոքական, մեթոդիստ և այլ այսպիսի անուններ, շարունակում է իր հնադարեան հալածանքը, բայց ոչ թէ գինված սխառնակական հարցադրումներով և իմաստություններով, որոնք հիմա ոչինչ նշանակություն չունեն, այլ քաղաքական-առևտրական դիտումներով: Այժմ գերմանացի պատուոք իր հայրենի երկրի ճոթ ու կոտորների, երկրների և պողպատէ ձուլումները առաջ շուկայ բաց անելու համար դիմում է այն արհեստին, որ Փրիստոսի աւետարանի բառացի հակադրություններն ու այլ ինչ է, բայց միայն մարդակերություն: Մնում է, որ հայրն ըրիտուհեան պարզակերպութեան դէմ պայքարեն... Թիւրքը: Այս փաստն էլ թող արձանագրէ պատմությունը:

Հեռագիրը հաղորդեց, որ Թագաւոր Կայսրը մի միլիոն լուրի նուրբեց անբերելությունից վնասված գիւղացիների օգտին: «Русскія Вѣд.» լրագիրը արձանագրելով այդ կարևոր լուրը, ասում է.

Այս առատ նուիրաբերությունը նորից յիշեցնում է, թէ որքան տարազան է անբերելությունից վնասված տեղերի ազգաբնակչության կարօտությունը: Մանր էլին այն պայմանները, որոնց մէջ գոյություն էր պահպանում այդ ազգաբնակչությունը աշխարհ և ձմեռվայ առաջին կէտում, բայց աւելի ծանրանում են նրանք այժմ, երբ հունձից մնացած ամեն բան կերված է և անասունների է տուած, իսկ մինչև հայահատիկների նոր հունձն և խոտի դուրս դալը դեռ քիչ ժամանակ չէ մնում: Արագ և առատ օգնությունը այժմ աւելի է պահանջվում, քան երբ և իցէ: և այժմ, աւելի քան երբ և իցէ ուստի հասարակության պարտությունից և կարեկցությունից են կախված միլիոնաւոր մարդկանց կենսան ու առողջությունը:

Այս, ժամանակին օգնել, առատություններ օգնել, փրկել է նշանակում: Գահի բարձրությունից ցոյց տուած առատություն մեծ օրինակը պիտի յիշեցնէ ամեն մի պարտաճանաչ մարդուն թէ ինչպէս պէտք է գործել՝ տանջվող մարդկությունը դժբաղդություն անդունդներից դուրս քաշելու համար: Հասարակությունները իրանց պարտաճանաչություններ են դուրսուր. թող, ուրեմն, բողոքած մարդը այս դժման ձմեռվայ ընթացքում լինի այդ պարտաճանաչություն փորձաբար:

ԱՄԱՋԱԿՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԱՍՍՈՒՄ

II

6) Դիւլոմատիայի միջոցով ստանալ իր աւուշը յետ պահանջելու այն աւազակներին, որոնք թաղանթում են թիւրքի աշխուժ և Պարսկաստանում Պիտի աւելի զօրացնել սահմանադրի պահակախմբերը: Հեղինակի առաջարկածն է միւս միջոցը՝ իրականութեամբ հետևելու աւազակներին սահմանից դուրս, օտար պետություն սահմաններում, ուսուցիլ և միայն. չէ որ նոյն իրաւունքը իր համար կուզէ և թիւրքն ու պարսիկը. հապատուր դրանց այդ իրաւունքը...

7) Սուլտան Երզնկադինի խիստ և անյայտազգ պատժելու Գորգաղաբը, մեր դատաւորները այնքան ծանրաբեռնված են ուղղակի գործերով, որ եթէ այդ տեսակ գործեր էլ յարուցանեն, այն ժամանակ իսկի գործեր չը

պիտի կարողանան վճռել: Այս, լինում են այսանդակ դէպքեր և ընթերցողին չը ձանձրացնելու համար՝ չեն պատմում մի քանիսր...

8) Միջոցներ որոնել աքսորից փախչելու դէմ: Չենք կարող համաձայնվել հեղինակի մի քանի հայեացքների հետ, որոնց գործադրությունը կը նշանակէ կամաւորապէս զրկվել մի քանի կուլտուրական յաղթուն լինելներից մեր աղքատ կենսութեամբ. այսպէս, նա առաջարկում է. ա) գինւորական վարչությունից մտցնել մուսուլման նահանգներում աւազակությունների չըրքանում, այն է՝ Բագրատ, Յիւդոսալեոսայրի և Երևանի նահանգներում: Յուդոսալեոսայրը կողմնակից չէ այս տեսակ կառավարություն, և համարում է դրանց իրերի դըրբությունից բղխող մի կայուն ծննդաբան աւազ, մենք էլ բնաւ չուզենալով զրեբարա ֆրեդաների ետևում թագնվել, ժողովուրդը կրթելու և խիստ միջոցների մէջ ոչ մի կապ չենք տեսնում, և կարող ենք այդ բէթիմ երկրպագուներին հաւատացնել, որ մեր խեղճ ժողովուրդն էլ գիտէ գնահատել Ալեքսանդր II-ի օրէնքների անաչառ գործադրություն և բարիքները: Ե) Տեղացի պաշտօնեաների թիւ սահմանափակումը: Այստեղ խօսքը հռչակաւոր սեպարատիզմի մասին չէ, այլ անդրադառնում է դարաշրջանի ստոր աստիճանի վրա կանգնած միլիոնայի պարագրիկներին տեղ տալու մասին է: Խորիքը կարծեմ կարող է վերաբերվել և ոչ տեղացուին. ուրեմն պէտք է պահանջել աւելի շիտակ, դարգացած պաշտօնեաներ, էլ ինչու ազգությունների խտրություն դրնել:

9) Աւազակներին խնամություն ձեռքը մատնելու համար վարձատրություն նշանակել և նրանց արտադրական գործունեությունը գնահատել խոշոր գումարներով: Այդ միջոցները մենք համարում ենք և ոչ գործնական, և որ զլխաւորն է՝ հակակուլտուրական. մենք առանց այն էլ ապրում ենք վայրենի կացութեան չըրքանում. աւելորդ է մտայնել ևս թանձրացնելու:

Նմանապէս դէմ ենք հեղինակի այն պնդման, թէ պէտք է՝ որքան կարելի է՝ շատացնել մահվան պատիմներ կախալանի միջոցով: Հեղինակը մեզ հաւատացնում է, որ թիւրքն այս մահից աւելի է վախեցում, քանի որ «կախալան հողին» դուրս է դալիս անմաքուր տեղով (Եր. 152): Չենք ուզում այստեղ ձառել մահվան պատժի դէմ, բայց չենք էլ ընդունում գիտություն հետ կախալանի դատաւարակից դերը, այսպէս Սուլտան-բուլը (Պարագալում, ուր կախված է եղել հռչակաւոր Աբդուլ-Քէրիմը), Զան-Յաթաղը (նոյնպէս Պարագալում, ուր Վիլհելմի գործի առիթով կախվել են միաժամանակ մի քանի հոգի) մի մի համալսարանների պիտի դարձած լինէին: Իսկ ինչ միջոցներ չեն գործադրվել, որ այս դատաւիճիկները հրապարակական լինեն:

Միանգամայն մեծում է պ. յօդուածագիրը, և մենք էլ միանում ենք նրան, մի քանի բարձրատեսակ և հեշտ միջոցներ, ինչպէս են էկզէկուցիան, որից տուժում են արդարն ու մեղաւորը, կամ, ճիշդն ասած, միայն արդարը, վարչութիւն և ձեռքով երկրից դուրս բռնելը, որ երկուսն էլ միջոց է և պահանջում է մեծ զգուշութիւն և հեղինակութիւն: (Տես խեղադրումով գործի ընդունություն սենսատում): Ազա դալիս է գիւղերի կամ աւուրների պատասխանատուությունը, երբ գոյութեան հետքեր բերել հասցրել են մինչև այդ գիւղը (հանդուցեալ իշխան Դոնդուկով չըրքանակաւոր): Դա միայն ջաջալերում է պաշտօնեաներին գործը ուրիշներ վրա գցել: Հակառակ ենք նոյնպէս, որ ցիրոսցան բնակչութիւնները ստիպողական միջոցներով համալսվել են մի պողոտայի, որ ասել է, թէ ժողովրդի անուսական կենսան հպատակեցնել պոլիցիական նպատակներին:

Նշանաւոր է, որ ուսումնարանական կրթութեան մասին յարգելի հեղինակը չէ ասում և ոչ մի խօսք: Ինչին վերագրել այդ:

Չենք կարող ի վերջոյ մեր ամփոսալքը չը յայտնել և այն առիթով, որ յօդուածը տպված է մի ոչ-հեղինակաւոր, անգամ արհամարհված ամսագրում:

Պետքս Զաքարեան

ՆԱՄԱԿ ՍԻՄՅԵՐՈՊՈԼԻՑ

Յունվարի 14-ին

Տեղիս հայ հասարակությունը, ցանկանալով մեր վերանորոգված եկեղեցում ունենալ աշխարհահայր հայազգի նկարիչ Ալվազովսկու հանձնարարութիւնը արդիւնք, անցեալ տարվայ վերջերում մի բազմաստորագիր խորհրդով դեմ ենք նրան, խնդրելով իր յիշատակին նուիրել մի պատկեր՝ Վերափոխման եկեղեցուն:

Ուրախութեամբ յայտնում ենք, որ հասարակություն խնդրելով անհետանք չը մնաց: Ալվազովսկին, յարգելով այդ խնդրը, յատկապէս տեղիս եկեղեցու համար պատրաստեց ս. Աստուածածնի պատկերը: Մի քանի օր է ինչ ստացված էր յիշեալ պատկերը, սակայն նրա օժուժը թողնված էր այսօրվան՝ Յովհաննէս Կարապետի ծննդեան տօնին, որ աշխարհահայր նկարչի անուանակոչությունն օրն է:

Պատկերի օժուժը կատարեց Օգոստոս Կարապետ Կարապետեան: Եկեղեցում ստիպականից աւելի ժողովուրդ կար. այնտեղ էին տեղիս զրպրոցների հոգաբարձուները, ամողջ ուսուցչական խումբը և երկու սեռի սաները: Օժման հանդէսը վերջնաւորեց յետոյ, պատարագ մատուցեց, որից յետոյ՝ Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան առիթով հոգեորականությունը մաղթանք կատարեց:

Տեղիս հայ հասարակությունը իր կողմից մի հեռագիր ուղարկեց Քէօզոսիս, պ. Ալվազովսկուն, որով նախ յայտնեց նրան իր անչափ և խորին շնորհակալութիւնը տեղիս եկեղեցուն նուիրած ս. Աստուածածնի պատկերի համար, և ապա շնորհակարեց նրա անուանակոչությունը:

Կ.—ցի

ՆԱՄԱԿ ԲԱԼԱՍՏԻՑ

Յունվարի 20-ին

Կովկասում նաւթի լոյս ընկնելուց յետոյ նրա գինը ամբարն էր բարձրացել, որքան այժմ է: Եւ դրա շնորհիւ է, որ աշխարհի ամեն մի բունջ ու պուճակից, ամեն դասակարգին պատկանող մարդիկ կը գտնէր Բալաստիումի Շարունակ նոր նոր ակցիօնեական ընկերություններ են, որ կազմակերպվում են. հասարակություն բոլոր խաւերում, ուր էլ որ գնաք՝ առօրեայ հարցը ակցիան է, և օրվայ հերոսը՝ ճարպիկ, միջոցների խտրություն չի թաքող սպեկուլյանտն է:

«Ակցիա» ծախելի, ուրիշն առայս: «Ակցիա» լծագրեց է: Շարունակ այսպիսի խօսքեր են, որ հնչում են ձեր ականջին: Փող և ակցիա... Բուռն տենչանք հարստանալու և աւելի ոչինչ: Ահա ձեզ մի ուսուցիչ, որը սրանից մի երկու տարի առաջ դասարանում ժառանգ սերունդն էր կրթում, այժմ տենչային դառնացանք մէջ է, որ այս ինչ ակցիօնեական ընկերությունից իրան բաժին չէ հասել:

Ահա մի իդէալիստ պարոն, որը թէ խօսելով և թէ գրելով շարունակ ծաղրում էր հասարակութիւնը, այժմ ինքն է վայնասուն գցել, որ այս ինչ ընկերությունից վերցրած բաժիններից պակաս օգտով ձախել է, բայց յետոյ լծագրեցած տենչելով՝ պատառը կուլ չէ գնում: Ահա բարձրագոյն կրթութեան տէր մի դիպլոմաւոր կուռավարի, որը մի կամ երկու տարի առաջ տղոջված էր փմմ գաղափարներով ուսանողական նստարանի վրա, և մարդկային անհատական իրաւունքների ջերմ պաշտպան էր: Այժմ չէ բարեհաճում մի օրպէ անցած մտածել այն հազարաւոր անբաղդ արարածների դրութեան մասին, որոնք ցիլիկ, նաւթ, մեր մէջ անասական շարքաւորներ կրելուց յետոյ, խոզերի պէս իրարու կողքին թափվելով են կիսախարխուլ զկալարմաներում:

Մասնագէտ պարոնի ինչ պէտքն է այդպիսի մանր-մանր բաներով զբաղվել. նրա ցան ու հոգն է, որ իր նստած կառքի ձկերը լինեն գէր և մաքուր, մի գոյնի, և կուռավարը հագնված լինի ըստ իր ճաշակին, որ փողոցներով անցնելիս մատով ցոյց տան:

Սակայն ուրախալի է միմիայն մի երևոյթ, որ երկրորդ լեռնային վարչությունը աշխատում է մի քանի դիւրութիւններ մտցնել տալով նաւթահանքերում բանող բանուորների համար, որոնք, սրտի ցաւով պէտք է ասել, դժուարութեամբ են գլուխ դալիս: «Մեր խաղայինները» չեն ուզում հասկանալ ասորական ճշմարտությունը, որ դիւրութիւններ մտցնելով նաւթահանքերում, միջոց են տալիս բանուորներին քիչ ու շատ մարդավարի ապրել, և չէ որ փորը կուշտ, ֆիզիկական առողջ բանուոր աւելի շատ ոսկիներ կաշխատէ տիրոջ համար: Մի քանի նաւթարդիւնաբերողներ իրանց պատրաստի նաւթահանքերը ծախելու օտար կապիտալիստներին, որոնք իսկին հեռագրին կապիտալիստներին. այսպէս էր, օրինակ, «Մասիս» ընկերությունը:

Տեղացի նաւթարդիւնաբերողները իրանց սեփական հողերից զրկվելով և անկարող լինելով արցունքի սկսել օտար կապիտալիստների դէմ, ստիպված կը լինեն՝ Բալաստիի չըրքանակաւոր ապրող նախկին հողատէր թուրքերի պէս՝ ողբալ իրանց գլուխը:

Թաւ.







ողջամարդկանցից 80 հոգի ուսանել են կամ լե-  
նացիները:  
Պատգամաւորները ժողովի յանձնաժողովը վե-  
րաքննութեան դրոշմի մասին ստացաւ լրացու-  
ցիւն տեղեկագիր, որ կազմել է Մազո: Քննու-  
թեան հետեանքը նպատակաւ է լէվ, Բար և  
Գիւմա խորհրդակցութեան համար: Յանձնաժողով-  
ը վճիռ՝ կառավարչական նախագծի վերաբեր-  
մամբ՝ դժուար է նախատեսել:  
ԲԻՐՈՍՆԵՆ-ՍԱԿԻՐԵՆ, 25 յունվարի: Վախճան-  
վեց պետական նախկին կանցլէր կոմս Կապրի-  
վի: Կոմսը վաղուց արդէն հիւանդ էր:  
ՎԱՇԵՆԳՏՈՆ, 25 յունվարի: Գեներալ Օտիս  
Մանիլիայից հեռագրեց, որ դրոշմինը բաւարար  
է, և վախճանաւ ոչինչ պատճառ չը կայ: Գաղա-  
քում և շրջակայքներում հանգստութիւն է տը-  
րում: Սանիտարական պայմանները և զօրքի ո-  
գին գերազանց են: Կիրակի առաւօտեան, չորրորդ  
ժամին, պատերազմում էին ամբողջ գծի վրա:  
Բոլոր յարձակումները յետ են մղված: Լուսաղե-  
մին ամէրիկական զօրքերը սկսեցին յարձակում  
գործել և զուրա արին ապստամբներին այն գծե-  
րից, որոնց նրանք առաջ դրաւ ունէին, նոյն-  
պէս և տրեցին մի քանի գիւղերին և ամբու-  
թիւններին: Գործին փառաւորապէս մասնակցեց  
և նաւատորմը: Ապստամբները լաւ են զինաւոր-  
ված զէնքերով: Ամէրիկական զօրքերը պատե-  
րազմում էին մեծ հերոսութեամբ: Ապա հեռա-  
գրի մէջ ասված է, որ կռիւ ընդհանուր հետե-  
ւանքը նպատակաւ եղաւ ամէրիկական զէնքի  
համար:  
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի: Հրատարակված  
է Բարձրագոյն հրովարտակ Կայսրութեան մէջ  
ժամտախտի մուտքը արգելելու համար կազմված  
յանձնաժողովի նախագահ Օրդէնըրգեան Ա-  
լեքսանդր պրինցի անունով, յայտնելով Բարձ-  
րագոյն շնորհակալութիւն աշխատութեան համար:  
ՊԱՐԻՉ, 26 յունվարի: Վճարեկ ատենանը,  
որպէս մագիստրատուրայի ծայրագոյն խորհուրդ,  
որոշեց հրամանագրել, որպէս զի քննութիւն  
կատարվի Վերալի դատարանի անդամ Գրոմա-  
նի գործի աւելիով: Գրոման զիմել էր Լէքսէին  
մի նամակով, որի մէջ նա մեղադրում էր քրէա-  
կան ատենանի անդամներին՝ թէ նրանք կողմ-  
նապաշտութիւն էին անում վերաքննութեան գոր-  
ծը քննելու ժամանակ:  
ՄԵՐԱՆ, 26 յունվարի: Վախճանվեց Մարտինս-  
բուրգում Սաքսէն-Կորբուրգ-Գոթայի թագաժա-  
ռանգ պրինցը:  
ՊԱՐԻՉ, 26 յունվարի: Դիւպլիւի այսօր ցուց-  
մունքներ տուեց վերաքննութեան յանձնաժողով-  
ըն և պնդում էր, որ յանձնաժողովը ընդունի  
նախագիծը, այն էլ որքան կարելի է՝ շուտ: Երբ  
հարցերն նրան քննութեան դոկումէնտները հրա-  
տարակելու մասին, Դիւպլիւի յայտնեց, որ թէ-  
պէտ և դոկումէնտները հրատարակութիւնը ան-  
յարմարութիւններ կը ներկայացնէ, բայց նա  
կատարեալ ազատութիւն է տալիս յանձնաժո-  
ղովին վճիռ կայացնել, իր պատասխանատու-  
թեամբ: Դոկումէնտներն այդ պատճառով տպա-  
րանին են յանձնված և շուտով կը բաժանվեն  
պատգամաւորներին: Դիւպլիւի հեռաւարուց յե-  
տոյ, յանձնաժողովը, 9 ձայնով 2-ի դէմ, մերժեց  
նախագիծը և զեկուցանող նշանակեց Բէնո Մոր-  
լէրին, որը և կը ներկայացնի զեկուցումը չու-  
րեքարթի: Քննութեան վերաբերեալ դոկումէնտ-  
ների հրատարակութիւնը ընդունվեց միաձայն:  
Ձեկուցանողը չորեքշաբթի կը պահանջի, որ  
պատգամաւորները ժողովը քննադատութիւնը  
նշանակի ուրախ:  
ՊԱՐԻՉ, 26 յունվարի: Երբ հարցերն վերա-  
քննութեան յանձնաժողովը վճիռ մասին, Դիւ-  
պլիւի պատասխանեց, որ կառավարութիւնը  
վստահութեան հարց կը դնի և կը մերժի ամեն  
տեսակ յաւելում, որի նպատակը կը լինի փո-  
խել օրէնքի բնաւորութիւնը:  
ՊԱՐԻՉ, 26 յունվարի: Վիճարանութիւնները  
վերաքննութեան յանձնաժողովում շատ կարճ  
էին: Կառավարչական նախագիծը ինչ հակառա-  
կորդներ յայտնեցին, որ նախագիծը կապ ունի  
Մազոի կատարած քննութեան հետ, և որովհետեւ  
քննութիւնը համոզեցուցիւ չէր, այդ պատճառով  
պէտք էր մերժել և նախագիծը:  
ԿԲՈՍՆԵՆ, 26 յունվարի: Կայսրը մի չափա-  
զանց համակրական հեռագրով դիմեց Կապրիվի  
քրդ զինքները Մորլին: Վերալի զինքները,  
իր զինւորական բարձր պետից մեծարված, որ-  
պէս կանցլէր՝ իմ համոզված և աշխատասէր աշ-  
խատակիցը, կոմս Կապրիվի մինչև անգամ իր  
առանձնութեան և անդործութեան մէջ վայելեց  
իր թագաւորի և կայսրի երախտագիտութիւնը  
և շնորհակալութիւնը: Վիլհելմ:  
ԼՈՆԴՈՆ, 26 յունվարի: Արժանահաւատ լու-

րերի համեմատ, վաղը դահական ճառի մէջ  
մատնացոյց արված կը լինի խաղաղ յարաբե-  
րութիւնների վրա օտար պետութիւնների հետ և  
Սուդանի օպերացիաների վրա, և յոյս յայտնված  
կը լինի, որ կրեական հարցը բարեկալով լուծ-  
ման ճանապարհի վրա դրվեց: Ճառը յիշում է  
ապա, թէ Սնդլիւն ընդունեց Ռուսաց Կայսրի  
հրաւերը՝ խաղաղութեան կոնֆէրէնցիա կազմե-  
լու մասին, նոյնպէս խորին զգացմունք է ար-  
տայայտված ճառի մէջ աւստրիական կայսրու-  
հու սպանութեան աւելիով և յիշելով հակա-  
անարկիական կոնֆէրէնցիան, հարաւոր է հա-  
մարում անգլիական օրէնքների փոփոխութիւնը  
անարկիստների մասին:  
Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ  
Հրատար.՝ ԱՐԴՈՒՆԻՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ  
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ  
(Կուկիա, Վորոնոյի արձանի հանդէպ)  
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի  
կիրակի օրերից:  
ԱՌԱՋՈՑ ՆԵՐԻՐ  
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաբու-  
թութեան, վերնաբերական (սիֆիլիս) և միզապնակ. հ.  
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին  
և նեարդալիս հ.  
Ջ. Ի. ԲԱՐԱՆՍԿԱՆՍԵԱՆ—11—12 ժ. կանանց  
հիւանդ.  
Ի. Ֆ. ՊՐՈՏԱՍԵՎԻԻ—12—1 ժ. ականջի,  
կուրդի, բժիշկ և կրծքի հ.  
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—11—12 ժ. ներքին և  
երեքուրդի հ.  
Ա. Գ. ԳՈՐԻՎՈ—11—12 ժ. ներքին և մի-  
ասեռական հ.  
ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐԻՐ  
Վ. Մ. ՄԱԽԱՎԻԱՆ—5—6 ժ. ներքին և երե-  
կայցի հ.  
Ա. Ն. ՇԱԽԱՎՈՍԿԻ—6—7 ժ. նեարդալիս (ե-  
րեկտորաբուժութիւն), վերնաբերական և մորթի հ.  
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—6—7 ժ.  
Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ Տիւրքալիսի քրիստոնէական  
և խաղաղութեան հետապնդութիւններ է ա-  
նում մէկի, լիւի, արեան, կաթիլի և այլն:  
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Հատկաւորը  
(կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին:  
Հիւանդանոցի վերանորոգ.  
83—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ  
Կիրակի, յունվարի 31-ին  
Թիֆլիսի Արտիստական ընկերութեան դահլիճում  
ՅՕԳՈՒՄ  
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
սիրողների մասնակցութեամբ, լինելու է ներկա-  
յացում՝ կոնցերտով: Խաղալու են  
I  
ԲԺՇԿԻ ՄՕՏ  
ՎՈՅԻՎԻ մէկ գործողութեամբ, հեղինակութիւն  
Նչեքովի:  
II  
ՎՈՒՅ ԳԻ ԻՄ ՎԵՉԵՐ  
ՎՈՅԻՎԻ երկու պատկերով, հեղինակութիւն Տէր-  
Գրիգորեանցի:  
III  
Մասնակցում են օր. օր. իշխ. Ս. Արդուլեան,  
Մ. Վորդանեան, Տ. Միրիմանեան, Մ. Ալիքե-  
զեան, Ն. Աբխազեան, պ. պ. Պ. Ալիքեզեան,  
պ. Փրիգոնեան, Գ. Միրազեան, Ս. Մուրեքեան,  
Ա. Քալանթարեան, Ի. Դուրախեան, Ա. Բու-  
նեաթեան:  
III  
ԿՕՆՑԷՐՏ  
Մասնակցութեամբ օր. օր. Անանեանցի, իշխ.  
Մ. Բեքուրեանցի, Ն. Իզմիրեանցի, Տ. Միր-  
մանեանցի և պ. Ի. Դուրախեանցի: Կոնցեր-  
տից յետոյ լինելու են ՊԱՐԻՉ:  
Սկիզբն է 8 ժամին:  
Տոմարները վարորդ կարելի է ստանալ Ըն-  
կերութեան գրասենյակում (Լորիս-  
Մելիքովի փողոց, տուն № 13), իսկ ներկա-  
յարման օրը՝ Արտիստական ընկերութեան մէջ՝  
սկսած երեկոյան 6 ժամից:  
1—3  
ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵՆՈՐԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
կար ու ձեւի դպրոցում ԼՈՒՍԱՆՈՑԻ դաս-  
ընթացը արդէն սկսված է: Ընդունելու-  
թիւնները շարունակվում են: Դանձակայա,  
№ 25:  
1—10  
ԲԺՇԿԱԴԵՏ Ե. Բ. ՔՐԱՆՅԻՈՒՄ  
մանադէտ կուրդի, բժիշկ և ականջի հիւանդու-  
թիւնները:  
Ընդունում է 5—7 ժամը երեկոյան. Վերամի-  
նովկայա փողոց, տուն № 4, Դուրախի հանդէպ:  
(Ե. չ. ո.)  
6—30

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Թիֆլիսում, վաճառվում են հետևեալ հայերէն նոր գրքերը.

| Գրքի անուն                                                                         | Թիֆլիս | Բ.  | Կ. |
|------------------------------------------------------------------------------------|--------|-----|----|
| Աղանեան Հ. Գ. «Արմա», գրական հանդէս, 1899 թ. ա. գիրք (IV տարի) Թիֆլ.               | —      | 2   | —  |
| » » Սաւրին հայերէն պատմ. օրացոյց, 1899 թ. Թիֆլ.                                    | —      | 50  | —  |
| » » Սաւրին Հ. Թիֆլ. 1898 թ.                                                        | —      | 40  | —  |
| » » Սաւրին, Շինոց, Նոր-Նախ. 1898 թ.                                                | —      | 30  | —  |
| » » Գուսեյի, վէպ, Թիֆլ. 1898 թ.                                                    | —      | 30  | —  |
| » » Աւետիքեան Ստ., Իրանդիայի դատը, Բագու, 1898 թ.                                  | —      | 80  | —  |
| » » Նահատակը, Թիֆլ. 1898 թ.                                                        | —      | 20  | —  |
| » » Բարեկարգեան, Բարոյական առանձինք, Թիֆլ. 1898 թ.                                 | —      | 20  | —  |
| » » Բարեկարգեան Ռ., Հայոց նորագոյն բանաստեղծները, մասն ա. Ռոստով Դոնի վրա, 1898 թ. | —      | 21  | —  |
| » » Բէրնէտ, Փոքրիկ լորդի պատմութիւնը, Բագու, 1898 թ.                               | —      | 25  | —  |
| » » Բրանդէս, Բանաստեղծը և հերոսը, Թիֆլ. 1898 թ.                                    | —      | 25  | —  |
| » » Բրուտեան, Ռամկական մրմունքներ, երկրորդ տպագր. Աղէքս. 1898 թ.                   | —      | 60  | —  |
| » » Իւր-Վարդիս, Օղբ և կեանք, Թիֆլ. 1898 թ.                                         | —      | 10  | —  |
| » » Ջելինսկի, Հաւ, տանիքի նկարով, Թիֆլ. 1898 թ.                                    | —      | 5   | —  |
| » » Թաւադեան, Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, Թիֆլ. 1898 թ.                       | —      | 40  | —  |
| » » Լաւալեան Եր., «Ազգագրական հանդէս», 1899 թ. դ. գիրք, Թիֆլ.                      | —      | 2   | —  |
| » » Ջաւադ, Թիֆլ. 1897 թ.                                                           | —      | 1   | —  |
| » » Ջանգելուրի դաւառ, Թիֆլ. 1898 թ.                                                | —      | 80  | —  |
| » » Վարանդա, Թիֆլ. 1898 թ.                                                         | —      | 1   | 20 |
| » » Լանգուարոտ, Մեղրեան, Թիֆլ. 1898 թ.                                             | —      | 15  | —  |
| » » Լեւոնուհի, Ամուսնութեան զարգացումը, Թիֆլ. 1897 թ.                              | —      | 20  | —  |
| » » Լեւոնուհի, Գե, Թիֆլ. 1898 թ.                                                   | —      | 15  | —  |
| » » Լ. Ա., Սաֆո, պոէմա, Շուշի, 1897 թ.                                             | —      | 50  | —  |
| » » Կոպլէ, Հանրիէտ, Թիֆլ. 1899 թ.                                                  | —      | 30  | —  |
| » » Մալիսեան Գ. Յովհ., Հորոտ-Մորոտ, ա. գիրք, Թիֆլ. 1898 թ.                         | —      | 30  | —  |
| » » Յարուկիւնեան Ի., Սանահին, Թիֆլիս, 1898 թ.                                      | —      | 30  | —  |
| » » Յուրայի վերջին գրքեր, Թիֆլ. 1898 թ.                                            | —      | 7   | —  |
| » » Պասկալ-Նրա կեանքը և գիտական գործունէութիւնը, Թիֆլ. 1899 թ.                     | —      | 20  | —  |
| » » Սկոտտ Վալտ., Կղզիների լորդը, Թիֆլ. 1898 թ.                                     | —      | 1   | —  |
| » » Սլիվիցկի, Խորամանկ աղուկը, Թիֆլ. 1898 թ.                                       | —      | 10  | —  |
| » » Սօլովեան, Կոտրված սիրտ, վէպ, Սոֆի. 1898 թ.                                     | —      | 40  | —  |
| » » Տէր-Ղ. Կոնդեանց, Մայրենի լեզու, ա. տ. Թիֆլ. 1899 թ.                            | —      | 35  | —  |
| » » Տարեք, մայրենի լեզուի բերականութեան, ա. և բ. մասերը, Թիֆլ. 1899 թ.             | —      | 50  | —  |
| » » Տաղաւարեան, Առողջապահութիւն առանձին, Կ. Պոլիս, 1898 թ.                         | —      | 2   | —  |
| » » Ֆոն-Վ. Լիւդւիգ Ռուս, Կաղաղի պոէմ, Թիֆլ. 1898 թ.                                | —      | 20  | —  |
| » » Հասցէն՝ ТИФЛИСЬ, Центральная Книжная Торговля. (Հ.)                            | —      | 1—3 | —  |

### Ն Օ Տ Ա Ր

#### Լ Ե Ւ Ա Ն Յ Ա Կ Ո Վ Բ Ե Ա Ն Մ Ղ Ե Բ Բ Ե Ա Ն Ի

գրասենեակը բաց է և գտնվում է 4-րդ քաղաքամասում, Երևանի հրապարակի և Գանձակայա փողոցի անկիւնում, Գուրգենովի տանը, № 2, քաղաքային տան կող-  
քին, Թամաշեանի բարաձանաւարի դիմաց: Տեղեֆոն 126.

Լ Ո Ց Ս Տ Ե Ս Ա Ի  
ԼԵՈ  
Մ Է Լ Ի Ք Ի Ա Ղ Ջ Ի Կ Ը  
(Պատմական վէպ, 755 էրես)  
Գիրք 1 ԲՈՒՐ. 30 ԿՈՂԵԿ (ուկրաինական 2 րուբլի)  
Մատվում է Թիֆլիսի ՍՈՒՄ—հեղինակի ժող. («Մշակի» խմբագրատանը) և Կենտրոնական գրա-  
վաճառանոցում: ՀՈՒՆՈՒՄ—Բարձրագոյն Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում:  
Հեղինակի հասցէն՝ ТИФЛИСЬ, редакция „Мшакъ“. 1—10

1899  
Ա Ր Ա Ր Ա Տ  
Ս. ԷՋՄԻԱՍԵՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ  
Բ ա ժ ա ն ո թ ղ ա գ ի ն է } Ռուսաստանում 4 ր.  
} Արտասահմանում 5 ր.  
Խնդրում ենք բաժանորդներին յայտնել իրանց ձիւղ հասցէները.  
Հասցէն՝ Эчмиадзинь, Типографическому Комитету, по части журнала „Ара-  
ратъ“. Արտասահմանի համար. Rédaction du Journal „Ararat“ Etchmiadzine  
(Caucase) 3—3

ՎԱՃԱՌԱՎԱՆՎԵՅ ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ  
Ե Ղ Բ Ա Յ Բ Ր Ա Կ Ա Ն Օ Գ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն  
ԹԻՐԲԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ՎԱՅԵՐԻՆ  
ԵՐԿՐՈՐԻ, ՆՈՐԻՑ ՄԵՍԿՎԵԾ ԵՒ ԼՐՏՐՈՒ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
ԳԻՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԱՍԽԱՍՈՎ, 3 ր. 70 ԿՈՂԵԿ  
2-ое ВНОВЬ ОБРАБОТАННОЕ И ДОПОЛНЕННОЕ ИЗДАНИЕ  
ЛИТЕРАТУРНО-НАУЧНОГО СБОРНИКА  
„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“.  
Въ настоящее удешевленное издание, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержанія въ  
прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣд-  
ствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культаурными условіями жизни армянъ въ  
прошломъ и въ настоящемъ. Въ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 чело-  
вѣкъ) армянъ—переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ  
числѣ многіе въ цѣльныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Трѣбизондѣ 1895 г.“ И. К. Айвазов-  
скаго и „Весенняя буря“ Магдесіана, въ три тона.  
Цѣна 3 р., съ пересылкой 3 р. 70 к.  
Склада въ конторѣ Русскихъ Вѣдомостей и въ книжн. магаз. Карбасникова на Мокшовой,  
№В. Янца, не окончившія счетовъ по 1-му изданію „Братской помощи“, благоволятъ посѣ-  
пить окончаніемъ таковыхъ.  
Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли сборника, перепечатать настоя-  
щее объявленіе.  
10—10  
Завѣд. ред. Гр. Джаншиевъ